# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Լիլիթ Սարգսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝** Գործառնական վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝** Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի 2023 թվականի ապրիլի 11-ից 13-ը:

**4. Հրավիրող կողմը՝** ԱՄՀ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

**5. Գործուղման նպատակը՝**

Մասնակցել «Հանրային ֆինանսների թվայնացում և թվային հանրային ենթակառուցվածքներ» թեմայով աշխատաժողովին, որը շրջանակներում ներկայացվել են հանրային ֆինանսների կառավարման համակարգի թվայնացման ժամանակակից միտումները, նորարարական մոտեցումները, պետական թվային ենթակառուցվածքները, ՊՖԿ թվային վերափոխումների կառավարման մոտեցումները: Խմբային գործնական աշխատանքի շրջանակներում քննարկվել են մասնակից երկների կողմից աշխատաժողովի ընթացքում ներկայացված թվայնացման գործիքների՝ DPI, GOVTech, Government platform և այլնի կիրառության հնարավորության հարցերը:

**6. Քննարկված թեմաները՝**

1. Հանրային ֆինանսների թվայնացում. գործընթացն ուղեկցող հիմնական դժվարությունները և մարտահրավերները,
2. Թվային վերափոխման կառավարում. կիբեր վտանգների կառավարում,
3. Պետական թվային ենթակառուցվածքներ (Digital Public infrastructure). հիմնական մոտեցումները և դրանց կիրառությունը
4. Պետական թվային ենթակառուցվածքների կիրառության հնդկական փորձը,
5. Պետական թվային ենթակառուցվածքների ներդրման առաջարկներ. ֆինտեխը ՊՖԿ ոլորտում
6. Մասնակից երկրների հանրային ֆինանսների կառավարման թվայանացման մոդելներ:

**7. Հանդիպումները, ելույթները՝**

Քննարկումներ են եղել դասընթացի թեմայի շրջանակներում. շնորհանդեսի տեսքով ներկայացվել են մասնակից երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի,

Ղազախստանի, Մոնգոլիայի, Ղրղզստանի, Պակիստանի հանրային ֆինանսների կառավարման ավտոմատացման գործող համակարգները: Աշխատաժողովի ընթացքում շնորհադեսի տեսքով (կցվում է) ներկայացվել է ՀՀ ՊՖԿ ոլորտում ներդրված և գործող ավտոմատացման ծրագրերը, ՀՀ կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման ուղղությամբ իրականացված քայլերը, ձեռքբերումները, ԿՖԿՏՀ ներդրման ընտրված մոդելը և առաջիկա անելիքները, ավտոմատացման ճանապարհին ի հայտ եկած խնդիրները և ռիսկերը:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Այդպիսիք առկա չեն:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այդպիսիք առկա չեն:

**Գործուղվող՝**

Գործառնական վարչության առանձին
գործառույթներ համակարգող խորհրդական
Լիլիթ Սարգսյան

(Ստորագրություն)

**18 ապրիլ, 2023թ.**